ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamayngapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 71-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի առաջին նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Արմեն Փ. Գրիգորյան		
Ջոն Կիրակոսյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Կարինե Նազարյան		
Սյուզաննա Նազարյան		
Անդրանիկ Տոնոյան		
Լևոն Պապյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

18.09.2026թ. ք. Ստեփանավան

1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 06-007-0291-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 2.68241 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

4. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

5. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՉԻԿ ՆՎԵՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՏԱԿ ՄԵԼՍԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

7. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ

8. ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Գ. ՊԱՊՅԱՆ

9. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԶԵԿՈՒՅՈՂ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 72-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-Ի ԹԻՎ 90-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ի ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ««Տեղական ինքնակառավարման մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 28-ի թիվ ՀՕ-404-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը, ««Համայնքային ծառայության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» 2026 թվականի հուլիսի 28-ի թիվ ՀՕ-393-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածը, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին փոխարինողի 2026 թվականի սեպտեմբերի 07-ի N 2364-Ա հրամանը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 90-Ա որոշման հավելված 2-ի Համայնքային ծառայության պաշտոնների անվանացանկի 1-ին տողի «աշխատակազմի քարտուղար» բառերը փոխարինել «աշխատակազմի ղեկավար» բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան

Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան
Արմեն Փ. Գրիգորյան
Ջոն Կիրակոսյան
Վանո Հակոբյան
Լիլիա Հարությունյան
Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Կարինե Նազարյան
Սյուզաննա Նազարյան
Անդրանիկ Տոնոյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան
համայնքի ավագանու 18.09.2026
թվականի թիվ 72-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ, ՎԱՐՉԱԿԱՆ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ , ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ 2026թ.

N	Հաստիքի անվանում	Հաստիքային միավոր	Դրույքաչափ	Ընդամենը
	Քաղաքական պաշտոններ			
1	Համայնքի ղեկավար	1	550000	550000
2	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	380000	380000
3	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	380000	380000
	Ընդամենը՝	3		1310000
	Հայեցողական պաշտոններ			
1	Համայնքի ղեկավարի օգնական	2	300000	600000
2	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	300000	300000
2	Համայնքի ղեկավարի մամուլի քարտուղար	1	220000	220000
2	Խմբակցության փորձագետ	**1**	135000	135000
	Ընդամենը՝	5		1255000
	Վարչական պաշտոններ			
1	Վարչական ղեկավար	3	270000	810000
	Ընդամենը՝	3		810000
	Համայնքային ծառայության պաշտոններ			
1	Աշխատակազմի ղեկավար	1	370000	370000
	Քաղաքաբաշինության ,հողաշինության և շրջակա միջավայրի պահպանության բաժին			
1	Բաժնի պետ	1	350000	350000
2	Բաժնի պետի տեղակալ	1	320000	320000
3	Գլխավոր մասնագետ	3	270000	810000
4	Առաջատար մասնագետ	**3**	200000	600000
	Ընդամենը՝	8		2080000
	Ֆինանսատնտեսագիտական բաժին			
1	Բաժնի պետ	1	350000	350000
2	Գլխավոր մասնագետ	2	270000	540000
3	Առաջատար մասնագետ	2	200000	400000
	Ընդամենը՝	5		1290000
	Եկամուտների հաշվառման հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժին			
1	Բաժնի պետ	1	350000	350000
2	Բաժնի պետի տեղակալ	1	320000	320000

3	Գլխավոր մասնագետ	1	270000	270000
4	Առաջատար մասնագետ	5	200000	1000000
	Ընդամենը՝	8		1940000
	Կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, սոցիալական աջակցության բաժին			
1	Բաժնի պետ	1	350000	350000
2	Գլխավոր մասնագետ	**2**	270000	540000
3	Առաջատար մասնագետ	**2**	200000	400000
	Ընդամենը՝	5		1290000
	Զարգացման ծրագրերի, տուրիզմի , արտաքին կապերի բաժին			
1	Բաժնի պետ	1	350000	350000
2	Գլխավոր մասնագետ,	1	270000	270000
3	Առաջատար մասնագետ	3	200000	600000
	Ընդամենը՝	5		1220000
	Աշխատակազմ/կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ/			
1	Գլխավոր մասնագետ	**5**	270000	1350000
2	Գլխավոր մասնագետ	1	270000	270000
3	Առաջատար մասնագետ	2	200000	400000
4	Առաջին կարգի մասնագետ	3	180000	540000
	Ընդամենը՝	11		2560000
	Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ			
1	Գործավար	1	300000	300000
2	Խմբակցությունների գործավարներ	3	135000	405000
3	Վարորդ	1	270000	270000
4	Ցրիչ	1	130000	130000
5	Հավաքարար	3	130000	390000
6	Հսկիչ	2	140000	280000
7	Տնտեսվար	1	270000	270000
8	Էներգետիկ կառավարիչ	1	350000	350000
9	Օպերատոր	0,5	200000/100000	100000
	Ընդամենը՝	13,5		2495000
	Քաղաքացիական աշխատանք կատարող			
1	Ցանցային ադմինիստրատոր	1	300000	300000
2	Անասնաբույժ	1	130000	130000
3	Արխիվային գործի վարող	1	180000	180000
	Ընդամենը՝	3		610000
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	70,5		17230000

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 73-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 06-007-0291-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 2.68241 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով 14.08.2024 թվականի N 14082024-06-0046 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի ապրիլի 12-ի N 286-Ն որոշման 8-րդ բաժնով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ համաձայնություն Ստեփանավան համայնքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող, գործառնական նշանակության, 06-007-0291-0026 կադաստրային ծածկագրով, 2.68241 հա մակերեսով հողամասը 5 (հինգ) տարի ժամկետով մրցութային կարգով վարձակալությամբ տրամադրելուն՝ մեկնարկային գին սահմանելով 40237 /քառասուն հազար երկու հարյուր երեսունյոթ / ՀՀ դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ Դեմ Ձեռնպահ

Արմեն Գրիգորյան
Վարսիկ Ասրյան
Անուշ Բաղդասարյան

Արմեն Փ. Գրիգորյան
Ջոն Կիրակոսյան
Վանո Հակոբյան
Լիլիա Հարությունյան
Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Կարինե Նազարյան
Սյուզաննա Նազարյան
Անդրանիկ Տոնոյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 74-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՓՈԽԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը նդունելով Վասիլ Ներսեսի Մայիլյանի կողմից ներկայացված 08.09.2026թ. թիվ 2705 դիմումը, 03.12.2012թ. թիվ 03122012-06-0309 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի N 02/27.1/13175-2026-19/08/2026 գրությունը, ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ղեկավարի 08.09.2026թ. N 1848 ծանուցումը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աշոտաբերդ թաղամասի կառուցապատման աշխատանքների իրականացման շրջանակներում նախատեսված է քանդել խոչընդոտ հանդիսացող շինությունները /անասնագոմեր, չշահագործվող կաթսայատուն և այլն/, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 12 ապրիլի 2001 թվականի թիվ 286-Ն որշման 6-րդ գլխի դրույթներով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ 06-007-0336-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված 0,1 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասը փոխանակել Վասիլ Ներսեսի Մայիլյանի սեփականությունը հանդիսացող (հիմք՝ 03.12.2012 թվականի թիվ 03122012-06-0309 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական) 06-007-0336-0036

կադաստրային ծածկագրով, 0.048 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության, խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հետ:

Հողամասում առկա է 06-007-0336-0036-001 և 06-007-0336-0036-002 կադաստրային ծածկագրերով կաթսայատներ, որոնք ենթակա են քանդման:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Արմեն Փ. Գրիգորյան		
Ջոն Կիրակոսյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Կարինե Նազարյան		
Սյուզաննա Նազարյան		
Անդրանիկ Տոնոյան		
Լևոն Պապյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 75-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԽԱՉԱՏՈՒՐ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչատուր Հարությունի Գրիգորյանի կողմից ներկայացված դիմումը, «Սամվել Կամսարի Ֆրանգյան» ԱՁ-ի կողմից կազմված հատակագծերը և ղեկավարվելով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Գոհար Խաչատուրի Ասրյանի սեփականությունը հանդիսացող 06-007-0128-0037 կադաստրային ծածկագրով, 0.1 հա մակերեսով, էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության էներգետիկայի օբյեկտների հողեր գործառնական նշանակության հողամասերը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել

ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերասեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Արմեն Փ. Գրիգորյան		
Ջոն Կիրակոսյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Կարինե Նազարյան		
Սյուզաննա Նազարյան		
Անդրանիկ Տոնոյան		
Լևոն Պապյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 76-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՉԻԿ ՆՎԵՐԻ ԱԼԵՔՍԱՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՏԱԿ ՄԵԼՍԻԿԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վաչիկ Նվերի Ալեքսանյանի կողմից ներկայացված դիմումը, «ԳԵՈԿԱԴ» ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագծերը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հուլիսի 23-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման ու փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-Ն ու 2010 թվականի մարտի 4-ի N 208-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1920-Ն որոշումով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Ստեփանավան համայնքի վարչական սահմաններում գտնվող Վաչիկ Նվերի Ալեքսանյանին և Արտակ Մելսիկի Միքայելյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 06-007-0063-0032 կադաստրային ծածկագրով, 4.51549 հա մակերեսով, հատուկ պահպանվող տարածքների նպատակային նշանակության հանգստի համար նախատեսված գործառնական նշանակության հողամասը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության:

2. Համայնքի ղեկավարին՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխման առաջարկության վերաբերյալ կազմված հողաշինարարական գործը ներկայացնել ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանը:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Արմեն Փ. Գրիգորյան		
Ջոն Կիրակոսյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Կարինե Նազարյան		
Սյուզաննա Նազարյան		
Անդրանիկ Տոնոյան		
Լևոն Պապյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 77-Ա

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ՄԱՐԶԱՀԱՄԱԼԻՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ» ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սոֆյա Ջևանի Չելոյանցի՝ «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքում ժամանակակից ֆուտբոլային մարզահամալիրի ստեղծում» ներդրումային ծրագիրն ավագանու հավանությանը ներկայացնելու մասին 17.09.2026 թվականի թիվ 2849 դիմումը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 65-րդ հոդվածի 6-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Տալ հավանություն Սոֆյա Ջևանի Չելոյանցի կողմից ներկայացված «Ստեփանավան համայնքում ժամանակակից ֆուտբոլային մարզահամալիրի ստեղծում» ներդրումային ծրագրին՝ համաձայն կից հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Արմեն Փ. Գրիգորյան		
Ջոն Կիրակոսյան		
Վանո Հակոբյան		

Լիլիա Հարությունյան
Հմայակ Մարտիրոսյան
Մարտուն Մարտիրոսյան
Կարինե Նազարյան
Սյուզաննա Նազարյան
Անդրանիկ Տոնոյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան
համայնքի ավագանու
18.09.2026 թվականի թիվ 77-Ա որոշման

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Ստեփանավան համայնքում ժամանակակից ֆուտբոլային մարզահամալիրի ստեղծման ներդրումային ծրագիր

1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանումը - «Ստեփանավան համայնքում ժամանակակից ֆուտբոլային մարզահամալիրի ստեղծում»

Վայրը- ՀՀ Լոռու մարզ, Ստեփանավան համայնք, Հ. Մեսրոպյան փողոց թիվ 31

Հողամասի կադաստրային ծածկագիր- 06-007-0053-0001

Հողամասի մակերեսը-7.37859 հա

Հողամասի սեփականատերը-Ստեփանավան համայնք

Սեփականության իրավունքի պետական գրանցման հիմքը- 16 մարտի 2026 թվականի N 16032026-06-0017 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական

Նախատեսվող մասնավոր ներդրման նվազագույն ծավալը-առնվազն 4,000,000,000 ՀՀ դրամ

Ծրագրի նախաձեռնող-Ստեփանավան համայնք

Նախատեսվող ներդրող-Սոֆյա Ջևանի Չելոյանց / ներդրողի կողմից ծրագրի իրականացման համար ստեղծվելիք կամ ներգրավվող իրավաբանական անձը՝ ըստ ընտրված իրավական և կազմակերպական մեխանիզմի:

2. Ծրագրի նկարագրություն

Ջևան Կրիկորիի Չելոյանցին պատկանող 5.9244 հա հողատարածքում Ֆուտբոլի զարգացման նպատակով ներկայումս ակտիվորեն իրականացվում են ճարտարապետական նախագծման և նախապատրաստական աշխատանքներ, ինչպես նաև փուլային հողային աշխատանքներ՝ տարածքը ծավալուն շինարարական գործընթացներին նախապատրաստելու նպատակով: Նախատեսվում է ընդլայնել նախագծի կոնցեպտը և ստեղծել միասնական ֆուտբոլային մարզական ենթակառուցվածք: Այդ նպատակով նախատեսվում է նաև

Ստեփանավան համայնքի սեփականությունը հանդիսացող՝ Հ. Մեսրոպյան փողոց թիվ 31 հասցեում գտնվող, 06-007-0053-0001 կադաստրային ծածկագրով, 7.37859 հա մակերեսով հողամասը նվիրաբերել Սոֆյա Ջևանի Չելոյանցին: Համայնքի սեփականության իրավունքի հիմքը՝ 16 մարտի 2026 թվականի N 16032026-06-0017 անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական: Հաշվի առնելով նշված հողամասի մակերեսը, տեղադիրքը և ներդրումային ծրագրի զարգացման հնարավորությունները՝ նախատեսվում է տարածքն օգտագործել ժամանակակից ֆուտբոլային մարզական ենթակառուցվածքի ստեղծման նպատակով:

Նախատեսվող ծրագրի գաղափարը սկզբնական նախագծի շրջանակից ընդլայնվել է՝ նպատակ ունենալով տարածքում ստեղծել ամբողջական ֆուտբոլային մարզահամալիր, որը կներառի գլխավոր ստադիոն, երկու ամբողջական մարզումային ֆուտբոլային մարզադաշտ և դրանց բնականոն գործունեությունն ապահովող ինժեներական ենթակառուցվածքներ: Ծրագրի շրջանակում նախատեսվում է գլխավոր ստադիոնը նախագծել և կառուցել ՈՒԵՖԱ-ի կատեգորիզացիոն չափանիշներին համապատասխան լիարժեք ֆուտբոլային մարզահամալիր:

Ծրագիրը լիովին համահունչ է Ստեփանավանի խոշորացված համայնքի զարգացման ռազմավարությանը և հնգամյա պլանին, քանի որ այն ուղղված է՝

- առողջ ապրելակերպի խթանման երիտասարդների շրջանում,
- համայնքային կյանքում երիտասարդների ակտիվ ներգրավվածության ապահովմանը,
- տեղական ենթակառուցվածքների զարգացմանը,
- բնակիչների կյանքի որակի բարձրացմանը,
- համայնքային մասնակցության և ներառման բարձրացմանը:

3. Ծրագրի հիմնական նպատակը

Ծրագրի հիմնական նպատակն է Ստեփանավան համայնքում ստեղծել ժամանակակից, բազմաֆունկցիոնալ և միջազգային չափանիշներին համապատասխան ֆուտբոլային մարզահամալիր՝ ապահովելով ֆուտբոլի զարգացման, մարզական միջոցառումների կազմակերպման, երեխաների և

երիտասարդների մարզական կրթության, մարզական տուրիզմի և համայնքի տնտեսական զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքային պայմաններ, ինչպես նաև ստեղծել տեղական աշխատատեղեր՝ ապահովելով ծրագրի երկարաժամկետ կայունություն:

4. Ծրագրի խնդիրները

- Ժամանակակից և միջազգային չափանիշներին համապատասխան ֆուտբոլային ենթակառուցվածքի սահմանափակ հասանելիություն
  Ստեփանավան համայնքում և տարածաշրջանում սահմանափակ են այնպիսի ժամանակակից ֆուտբոլային ենթակառուցվածքները, որոնք կարող են ապահովել բարձր մակարդակի մարզումների, ուսումնամարզական հավաքների և մրցումների կազմակերպման համար անհրաժեշտ պայմաններ:
- Պատանի ֆուտբոլիստների մարզական կրթության և զարգացման համար անհրաժեշտ պայմանների սահմանափակվածություն
  Պատանի սերնդի ֆուտբոլային կրթության և մարզական պատրաստվածության շարունակական զարգացման համար անհրաժեշտ է համապատասխան մարզադաշտերի, մարզումային տարածքների և օժանդակ ենթակառուցվածքների ամբողջական համակարգ: Առանձին մարզական տարածքների առկայությունը հնարավորություն չի տալիս ձևավորել ամբողջական և երկարաժամկետ զարգացման միջավայր:
- Մարզումային և մրցումային ենթակառուցվածքների միասնական համակարգի բացակայություն
  Գլխավոր ստադիոնի, մարզումային դաշտերի, մարզիկների սպասարկման, բժշկական, անվտանգության, ինժեներական և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքների մեկ համալիրում համադրումը հնարավորություն կտա ստեղծել ֆուտբոլի զարգացման ամբողջական կենտրոն:
- Մանկապատանեկան ֆուտբոլի կայուն զարգացման համար երկարաժամկետ ենթակառուցվածքային հիմքի անհրաժեշտություն
  Ֆուտբոլի նկատմամբ երեխաների և երիտասարդների հետաքրքրությունը

վերածելու կայուն մարզական մասնակցության՝ անհրաժեշտ է ապահովել ոչ միայն մարզումների վայր, այլև շարունակական կրթության, մարզական պատրաստվածության և մրցակցային փորձի զարգացման պայմաններ:

- Մարզական տուրիզմի և տարածաշրջանային մարզական միջոցառումների զարգացման չօգտագործված ներուժ Ժամանակակից մարզահամալիրի ստեղծումը հնարավորություն կտա Ստեփանավանում կազմակերպել ուսումնամարզական հավաքներ, մանկապատանեկան մրցաշարեր, ֆուտբոլային ճամբարներ և այլ մարզական միջոցառումներ՝ ներգրավելով այցելուների և մարզական խմբերի:
- Համայնքի տնտեսական և զբաղվածության ներուժի լրացուցիչ օգտագործման անհրաժեշտություն:

Խոշոր ներդրումային մարզական ծրագրի իրականացումը կարող է ստեղծել ինչպես շինարարության ընթացքում ժամանակավոր, այնպես էլ շահագործման փուլում մշտական աշխատատեղեր և լրացուցիչ պահանջարկ՝ հյուրանոցային, սննդի, տրանսպորտային և այլ ծառայությունների ոլորտներում:

5. Ծրագրի սպասվող արդյունքները

Ծրագրի արդյունքում նախատեսվում է ձևավորել միասնական ֆուտբոլային մարզական կենտրոն, որը կհամադրի գլխավոր ստադիոնը, երկու մարզումային դաշտերը և դրանց լիարժեք գործունեությունն ապահովող ինժեներական ու սպասարկման ենթակառուցվածքները: Ծրագիրը նպատակ ունի ստեղծել պատանի սերնդի ֆուտբոլային կրթության և մարզական պատրաստվածության զարգացման ամուր հիմքեր, խթանել առողջ ապրելակերպը, մարզական տուրիզմը և համայնքի տնտեսական ակտիվությունը

6. Թիրախ խումբ

Ծրագրի թիրախ խմբերն են Ստեփանավան համայնքի և Լոռու մարզի երեխաներն ու պատանիները՝ հատկապես 6–18 տարեկան տարիքային խմբերը, ովքեր հետաքրքրված են ֆուտբոլով և ցանկանում են ստանալ համակարգված ֆուտբոլային կրթություն ու մարզական պատրաստվածություն: Թիրախային խմբում

ներառվում են նաև երիտասարդ ֆուտբոլիստները, մարզիչները, մարզական մասնագետները, տեղական ֆուտբոլային թիմերն ու մարզական կազմակերպությունները: Ծրագրի անուղղակի շահառուները կլինեն Ստեփանավան համայնքի և հարակից համայնքների բնակիչները, մարզական միջոցառումների այցելուները, մարզիկների ընտանիքները, ինչպես նաև մարզական և զբոսաշրջային ծառայություններ մատուցող տեղական բիզնեսները: Ծրագրի առանձնահատուկ շեշտադրումը դրվելու է պատանի սերնդի ֆուտբոլային կրթության և մարզական պատրաստվածության զարգացման վրա, որի նպատակով ստեղծվելու են երկարաժամկետ և շարունակական մարզման, կրթության, մրցակցության և մասնագիտական զարգացման հնարավորություններ:

6. Ծրագրի նախնական բյուջե

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նախնական բյուջեն կազմում է առնվազն 4,000,000,000 ՀՀ դրամ: Ներդրումների վերջնական ծավալը պետք է ճշգրտվի նախագծանախահաշվային փաստաթղթերի, տեխնիկական նախագծի, շինարարական աշխատանքների ծավալների և շուկայական արժեքների հիման վրա:

7. Ծրագրի շրջանակում նախատեսվում է կառուցել՝

Էլեկտրամատակարարման ենթակայան

Նախատեսվում է առանձին էլեկտրամատակարարման ենթակառուցվածք՝ մարզադաշտի, մարզումային դաշտերի, լուսավորության, ջեռուցման, անվտանգության և այլ համակարգերի պահանջները բավարարելու նպատակով:

Կաթսայատուն

Նախատեսվում է կառուցել կաթսայատուն՝ մարզահամալիրի ջեռուցման և անհրաժեշտ տաք ջրի ապահովման նպատակով:

Ջրային ռեզերվուար

Նախատեսվում է ջրային պաշարների ռեզերվուար՝ մարզահամալիրի ջրամատակարարման կայունությունն ապահովելու, ինչպես նաև խաղադաշտերի ոռոգման անհրաժեշտությունը սպասարկելու նպատակով:

Ջրահեռացման համակարգ

Նախատեսվում է արդյունավետ ջրահեռացման համակարգ՝ խաղադաշտերի, տրիբունաների, հարակից տարածքների և ճանապարհների անվտանգ և բնականոն շահագործումն ապահովելու համար:

8. Ծրագրի իրականացման ժամկետները՝

Ծրագրի վերջնական իրականացման ժամկետը պետք է սահմանվի նախագծանախահաշվային փաստաթղթերի և շինարարական աշխատանքների ծավալների վերջնական հաստատումից հետո: Նախնական նպատակային ժամկետը կարող է սահմանվել 36-48 ամիս, որը ներառում է նախագծման, թույլտվությունների, շինարարության, սարքավորումների տեղադրման և գործարկման փուլերը: Վերջնական ժամկետը ենթակա է ճշգրտման:

9. Ծրագրի իրականացման փուլերը

- նախագծային և տեխնիկական ուսումնասիրություններ
- ճարտարապետական և ինժեներական նախագծում
- շինարարության նախապատրաստում և հողային աշխատանքներ
- ստադիոնի, 2 մարզումային դաշտերի և ինժեներական ենթակառուցվածքների կառուցում
- սարքավորումների տեղադրում և համակարգերի փորձարկում
- մարզահամալիրի գործարկում և փուլային շահագործում

10. Եզրակացություն

Ծրագրի հետագա փուլում անհրաժեշտ է իրականացնել՝

1. հողամասի շուկայական/կադաստրային արժեքի գնահատում,
2. հողամասի իրավական կարգավիճակի վերջնական ուսումնասիրություն,
3. ներդրողի իրավական կարգավիճակի հստակեցում,
4. ներդրման աղբյուրների և ֆինանսավորման հաստատում,
5. տեխնիկատնտեսական հիմնավորման մշակում,
6. գլխավոր հատակագծի և նախնական ճարտարապետական հայեցակարգի մշակում,
7. նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում,
8. շինարարության և շահագործման ֆինանսական մոդելի կազմում,

9. համայնքի և ներդրողի միջև համապատասխան իրավական հարաբերությունների ձևակերպում,

10. ներդրումային ծրագրի իրականացման ժամկետների վերջնական սահմանում,

11. ծրագրի իրականացման և հետագա շահագործման վերահսկողության մեխանիզմների հաստատում:

Ծրագրի տեխնիկական վերջնական լուծումները պետք է մշակվեն Հայաստանի Հանրապետության գործող քաղաքաշինական և տեխնիկական նորմերի, անվտանգության պահանջների և տվյալ մարզադաշտի նախատեսվող մրցակցային օգտագործման նկատմամբ կիրառելի մրցաշարային կանոնակարգերի համակցված հիմքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 78-Ա

ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ստեփանավան խոշորացված համայնքի բնակիչների դիմումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Ստեփանավան համայնքի ավագանին՝ ***որոշում է.***

1. Սահմանել արտոնություն անշարժ գույքի հողի հարկի 2008-2020 թվականներն ընկած ժամանակահատվածում առաջացած տույժերի նկատմամբ և կից հավելվածով ներկայացված անձանց ազատել անշարժ գույքի հողի հարկի նկատմամբ առաջացած տույժերից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանիներ.

	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան			
Վարսիկ Ասրյան			
Անուշ Բաղդասարյան			
Արմեն Փ. Գրիգորյան			
Ջոն Կիրակոսյան			
Վանո Հակոբյան			
Լիլիա Հարությունյան			
Հմայակ Մարտիրոսյան			
Մարտուն Մարտիրոսյան			
Կարինե Նազարյան			
Սյուզաննա Նազարյան			

Անդրանիկ Տոնոյան
Լևոն Պապյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու 18.09.2026
թվականի թիվ 78-Ա որոշման

Ազգանուն, անուն	տույժը առ. 2020թ	ապառք
Կիրակոսյան Երջանիկ	134663	
Գրիգորյան Միքայել	51704	
Սարգսյան Խաչատուր	149499	
Կիրակոսյան Ժիրիկ Գ	111170	
Ավոյան Օֆելյա	96694	
Սարգսյան Վաղինակ	154284	
Կիրակոսյան Զորիկ Հ	6513	
Սարգսյան Կյուդվիգ	16901	
Մելոյան Մասիս	185882	
Սարգսյան Զավեն	24415	
Սարգսյան Վալիկո	133628	
Չալաբյան Գևորգ	277356	
Մխոյան Հայկազ	41513	
Սավթալյան Էդվարդ	70727	
Մանասյան Լևոն	47594	
Ընդամենը	**1502543**	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33,
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» սեպտեմբերի 2026 թվականի N 79-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ և 64-րդ հոդվածներով, Ստեփանավան համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավան համայնքի ավագանու տասնմեկերորդ նստաշրջանի երկրորդ նիստի գումարման օր սահմանել 14.10.2026թ. ժամը 14.30 -ին:

Համայնքի ավագանիներ.

Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Արմեն Գրիգորյան		
Վարսիկ Ասրյան		
Անուշ Բաղդասարյան		
Արմեն Փ. Գրիգորյան		
Ջոն Կիրակոսյան		
Վանո Հակոբյան		
Լիլիա Հարությունյան		
Հմայակ Մարտիրոսյան		
Մարտուն Մարտիրոսյան		
Կարինե Նազարյան		
Սյուզաննա Նազարյան		
Անդրանիկ Տոնոյան		
Լևոն Պապյան		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ